ՍՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆ

ՃԱՌԵԼՈՎ ՓՐԿԵՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Ելի՛ր, ում կյանքը անիծել է

Երեկ գիտությունների ազգային ակադեմիայի մեծ դահլիճում հավաքված գիտաշխատողները մի քանի ժամ շարունակ «բմբլահան արեցին» ՄԱԿ-ի փորձագետների մշակած գիտության բարեփոխումների ծրագիրը:

«Հակաակադեմիական ուժերի» դեմ կենաց-մահու պայքար սկսելու նպատակով անգամ թմբիրից արթնացել էր ԳԱԱ արհեստակցական կազմակերպությունների կոմիտեն, որն էլ երեկվա ժողովի նախաձեռնողն էր: Ինչպես նշեց միացյալ կոմիտեի նախագահ ԿԻՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ, ակադեմիայի ինստիտուտների արհկոմների նախագահները մեկ էլ 6 տարի առաջ էին ժողով հրավիրել: Եվ հիմա, երբ վճռվում է «գիտության կաճառի, տաճարի ու վանքի ճակատագրի հարցը», իրենք չէին կարող լռել:

Լռելը ջլռեցին, բայց ինչ նոր բան ասվեց ժողովի ընթացքում: Այն, ինչ մեկ ամիս շարունակ հայտարարում են լրատվամիջոցներով ակադեմիկոսներն ու ինստիտուտների տնօրենները, պարզապես նույնությամբ կրկնեցին: Եվ միայն ժողովի ավարտին, որոշ գիտաշխատողներ տեսնելով, որ երկու տասնյակից ավելի բանախոսների ելույթներում որևէ գործնական առաջարկություն չի հնչում, բարձրաձայն բողոքեցին, թե «*ինչ է հավաքվել ենք, որ ջուր ծեծենք*»:

Կիմա Միքայելյանն իր ելույթն սկսեց շատ հեռվից, նշելով, թե դեռևս 92-93թթ. սկսած ծայր առան «հակաակադեմիական տրամադրություններ» և հենց այդ շրջանում մեկնարկեց «գիտության աստիճանական նսեմացման գործընթացը», երբ «պետպատվերի շրջանակում հրաժարական տվեց ԳԱԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը»: «Ամո՛թ»,- գոռացին դահլիճից:

PHOTOLURE

Շարունակելով խոսքը՝ միացյալ կոմիտեի նախագահը նշեց, որ անցած մեկուկես տասնամյակի ընթացքում համակարգի աշխատակիցների թիվը կտրուկ նվազել է՝ 90-ականներին արձանագրված 12 հազարի փոխարեն այսօր համակարգում մնացել է ընդամենը 3700 աշխատակից, որից միայն 2100-ն է գիտաշխատող: «*Ինչ է նշանակում գիտության դոկտորին ամսական վճարել 28 հազար դրամ նվաստացուցիչ աշխատավարձ, ինչ է նշանակում գիտությանը հատկացնել պետբյուջեի մեկ տոկոսը*»,- վրդովված հարցրեց բանախոսը:

Այնուհետև անընդունելի համարելով ՄԱԿ-ի եզրակացությունը, ըստ որի ԳԱԱ-ն պետք է վերածվի հասարակական կազմակերպության, հայտարարեց, որ իհարկե «*թերություններ կան ԳԱԱ նախագահության աշխատանքներում, որոնք կարող են կոլեկտիվների աշխատակիցների դժգոհություն առաջացնել: Բայց դա չպետք է հասնի նախագահությանը քայքայմանը, որովհետև դա կտա շղթայական ռեակցիա, կառաջացնի այն փլուզումները, որոնք համակարգը կարող են ընդհանրապես ցրել: Առանց նախագահության, ինստիտուտները կմնան առանց ծնողի*»: Կարեորելով ակադեմիայի դերն ու նշանակությունը՝ ելույթի վերջում հիշեց նաև Սայաթ-Նովային. «Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե»:

Պատմահայր խորենացու խոսքը մեջբերեց երիտասարդ արեւելագետ ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, որը ՄԱԿ-ի եզրակացության դեմ ոտքի ելած գործընկերներին անվանեց «զինակիցներ», սակայն ելույթն ավարտեց իր խոսքից մեջբերելով «*Գիտության մայրամուտը պետության մայրամուտն է*»: Արվեստի ինստիտուտի աշխատակից ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆԸ առաջարկեց գիտնականների աշխատավարձը երկրորդ եռամսյակից եռակի բարձրանցել: Կամ գտնե կրկնակի, բնականաբար, մոռանալով, որ 2006-ի պետբյուջեն վաղուց արդեն հաստատվել է:

«*Երանի հավատացեք*»,- աշխատավարձի բարձրացման մասին առաջարկը լսելուց հետո իր ելույթն այսպես սկսեց գրականության ինստիտուտի տնօրեն ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ, որը դժգոհեց, թե «*15 տարի մենք խոսում ենք և 15 տարի մեզ ոչ ոք չի լսում: Ակադեմիայի այս միճակը հո նոր չէ: Երրորդ հանրապետության ստեղծումից ի վեր հենց այսպես օդում կախված ենք*»: Գիտության դոկտորը վտանգավոր է համարում այն ելակետը ինչով առաջնորդվել են ՄԱԿ-ի փորձագետները ծրագիրը մշակելիս: Փաստորեն հարցը կոնկրետ է դրվում «*Հայաստանին գիտություն պե՞տք է, թե՞ ոչ*»: Այն դեպքում, երբ ինքն ուղղակի համոզված է, որ «*հայ մարդը Հայաստանն առանց ակադեմիայի ուղղակի չի պատկերացնում*»:

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի տնօրեն ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻ համոզմամբ, ՄԱԿ-ի ծրագիրը ոչինչ է և «գիտության զարգացման նպատակ բացարձակապես չի հետապնդում»:

Ըստ տոցիոլոգի, «*եթե մենք գիտնականներից ընդհանրապես հրաժարվենք, ասենք, որ մեզ գիտություն պետք չէ, վաղը կկարդա՞ն, որ արվեստ է պետք չէ, կրթություն է պետք չէ: Եվ կմնան մի քանի մեծահարուստներ՝ զարեջուր արտադրող, նավթ ներկրող: Հետո էլ Հայաստանը կփակենք*»: Նա հայտնեց նաև, որ ինքը կոմունիստական չէ որպես թանգարան ակադեմիան պահպանելուն է ոչ էլ ուզում է, որ Լենինի արձանի պես այն քանդեն՝ «*ուղղակի պետք է մտածել գիտության զարգացման մասին*»:

Ինչպե՞ս երբ պարզվում է, որ ԳԱԱ նախագահության հանձնարարությամբ մշակված բարեփոխումների ծրագիրը «աղբանոց գցելու թուղթ է»: Այս բացահայտման էլ արեց օրգանական քիմիայի ինստիտուտի գիտաշխատող ԱՌՆՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ: Վերջինս նաև ժողովականներին կոչ արեց «*ստիպել նախագահությանը, որ պատժեն այդ ծրագիրը կազմողներին*»: Եթե ԳԱԱ-ի ծրագիրը բանի պետք լիներ, 35 հազար դոլար չէին հատկացնի ՄԱԿ-ի փորձագետներին, որ ծրագիր մշակեին:

Ա.Հովհաննիսյանի երկրորդ բացահայտումն էլ այն էր, որ այսօր «դեռ էդ ՄԱԿ-ի նախագծի թուղթը չորացած՝ ակադեմիայում հայտնվել են մարդիկ, որոնք ի կատար են ածում դա»: Փաստ է նշեց, հայտնելով, որ այսօր արդեն նույնը օրգանական և օրգանական քիմիայի ինստիտուտները միացվում են և տեղում մեղադրեց նույնը օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենին, որ չի ընդդիմանում և կատարում է միացման հրահանգը:

Իսկ պատմության ինստիտուտի տնօրեն ԱԵՌՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ վստահ է, որ «ակադեմիայի ոսկորը շատ մեծ է, կով չի գնա», քանզի «*վասն հայրենյաց աշխատում ենք*»:

ԿԻՄԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ